

Երեւանի Սէջ Պաշտօնապէս Նշուեցաւ Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան 128-Ամեակը



Հանդիսութեան ընթացքին ելոյթ կ'ունենայ ՄԴՀԿ Կեդրոնի ատենապետ Յակոբ Տիգրանեան

Շաբաթ 14 Մարտ 2015-ին, կազմակերպութեամբ ՄԴՀԿ Հայաստանի վարչութեան, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը Երեւանի մէջ հանդիսաւոր կերպով նշեց կուսակցութեան հիմնադրութեան 128-րդ տարեդարձը: Նշենք, որ ձեռնարկը տեղի ունեցաւ Երեւանի Հանրապետութեան հրապարակին մօտ գտնուող կառավարութեան «Նիստերու դահլիճ» սրահին մէջ:

Յայտնի թէնոր Արտակ Ալավերտեան կատարեց ՀՀ եւ ՄԴՀԿ քայլերգները, որմէ ետք հանդիսութեան բացումը կատարեց ՄԴՀԿ Հայաստանի վարչի Մարմինի փոխատենապետ վազգէն Մեսրոպ-

եան, որ հակիրճ խօսք մը արտասանելէ ետք ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան լուսնամբ յարգելու կուսակցութեան նահատակներուն յիշատակը: Այնուհետեւ Ընկ. Մեսրոպեան բեմ հրաւիրեց Սուրբ Էջմիածնի միաբաններէն՝ Տ. Ոսկան Արք. Գալփաքեանը իր օրհնութեան խօսքը փոխանցելու ներկաներուն: Սրբազան հայրը պատմական կարճ ակնարկ մը ներկայացնելէ ետք, նկատել տուաւ, որ իրեն համար որպէս եկեղեցական միշտ առաջնային եղած է քրիստոնէութեան ըմբռնումներով առաջնորդուելը: Ան զուգահեռ մը

Շաբ.ը էջ 5

Սերժ Սարգսեան. «Թրքական Իշխանութիւնները Վտանգաւոր Նախադէպ Կը Ստեղծեն»

Մարտ 18-ին Երեւանի մէջ տեղի ունեցող «Արարատի Ստորոտին» միջազգային մամուլի համաժողովի ընթացքին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան յայտարարեց, պը Թրքական Իշխանութիւնները իրենց ժխտողական քաղաքականութեամբ ոչ միայն կ'արդարացնեն Օսմանեան Իշխանութիւններու յանցագործութիւնը՝ հայերու հայրենազրկումը, այլեւ վտանգաւոր նախադէպ կը ստեղծէ նոր ցեղասպանութիւններու իրագործման համար:

«2015 թուականին Հայաստանը, աշխարհասփիւռ հայութիւնը միջազգային հանրութեան հետ չիշուծ եւ ողբերգութեամբ մէկ դար առաջ Օսմանեան կայսրութիւնում իրականացուած Հայոց Ցեղասպանութիւնը, որին զոհ դարձաւ 1.5 միլիոն հայ, հարիւր հազարաւորներն էլ դարձան զաղթական կամ բռնի կրօնափոխ եղան: Իւրաքանչիւր հայ, աշխարհի որ անկիւնում

էլ գտնուի, զգուճ է Մեծ եղեռնի հետեւանքները թէ՛ բարոյահոգեբանական, թէ՛ մշակութային, թէ՛ լեզուական եւ թէ՛ քաղաքական առումներով»,- ըսած է Սարգսեան ու աւելցուցած. «Մենք կը ցանկանանք Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը ոգեկոչել նաեւ թուրք ժողովրդի հետ միասին՝ դրանով իսկ ազգարարելով երկու ժողովուրդների միջեւ հաշտեցման եւ յարաբերութիւնների հաստատման մի նոր հանգրուան, որին էլ միտուած էին 2009 թուականին Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ստորագրուած արձանագրութիւնները եւ իմ հրաւերը Թուրքիայի նախագահ Էրդողանին՝ Ապրիլի 24-ին միասին յարգելու Հայոց եղեռնի զոհերի յիշատակը: Յաւօք, այս անգամ էլ մենք բախուցինք ժխտողականութեան հետ, որն այս տարի առանձնապատուկ դրսեւորում ստացաւ»:

Շաբ.ը էջ 4

Գոնկրէտէն Ներս Երկայացուեցաւ Հայկական Ցեղասպանութեան Նոր Բանաձեւ Սը



Ամերիկեան Գոնկրէտի անդամները կը ներկայացնեն Հայկական Ցեղասպանութեան բանաձեւը

Մարտ 18-ին, Ուոշինկթընի մէջ, Ամերիկեան Գոնկրէտի շէնքին առջեւ տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարուեցաւ «Հայկական ճշմարտութիւն եւ Արդարութիւն» թիւ 154 բանաձեւի ներկայացման մասին: Հանրապետական եւ Դեմոկրատ Գոնկրէտականներու հովանաւորութիւնը վայելող բանաձեւը ներկայացուեցաւ Հայկական Համախմբումի անդամներ՝ Ռոպերթ Տոլտի (Հանր. Իլինոյէն), Ատամ Շիֆի (Դեմ. Քալիֆորնիայէն), Ֆրանք Փալոնի (Դեմ. Նիւ ձըրզիէն) եւ Տէյվիտ վալտոյի (Հանր. Քալիֆորնիայէն) կողմէ:

Գլխաւոր հովանաւորներու կողքին Բանաձեւի վաւերացման ի նպաստ արտայայտուեցան գոնկրէ-

տականներ՝ Աննա Էլու (Դեմ. Քալիֆորնիայէն), Պրէտ Շըրմըն (Դեմ. Քալիֆորնիայէն), ձէքի Սփիլը (Դեմ. Քալիֆորնիայէն), ձիւտի Չու (Դեմ. Քալիֆորնիայէն) եւ Տէյվիտ Թրոթ (Հանր. Միչիկընէն):

Բանաձեւը ցարդ կը վայելէ Երկայացուցիչներու Տան 40 անդամներու հովանաւորութիւնը եւ կու գայ կոչ ընելու Միացեալ Նահանգներու նախագահին, Չանքեր թափելու՝ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ արդար, կառուցողական եւ երկարատեւ յարաբերութիւններ հաստատելու, որ հիմնուած ըլլայ Թուրքիոյ Հանրապետութեան կողմէ Հայկական Ցեղասպանութեան իրողութեան ճանաչման վրայ:

ՀԱՆ Զորակցութիւն Կը Յայտնէ Վարդան Կարապետեանին Եւ Էրիք Եսայեանին



Էրիք Եսայեան

Վարդան Կարապետեան

Ապրիլ 7-ին, Կլէնտէլէն ներս տեղի պիտի ունենան Քաղաքապետական Խորհուրդի ընտրութիւններ եւ այս առթիւ ՄԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) իր գորակցութիւնը յայտնեց երկու Հայ թեկնածուներու՝ Վարդան Կարապետեանին եւ Էրիք Եսայեանին:

Այս առթիւ հրապարակուած

հաղորդագրութեան մը մէջ ՀԱԽ կու գայ յայտնելու թէ, այս երկու թեկնածուներուն գորակցելու որոշումը կայացուած է, անոնց հետ տեղի ունեցած հանդիպումներէն ետք, որոնց ընթացքին քննարկուած են անոնց տեսակէտները՝ քաղաքը յուզող հարցերուն շուրջ

Շաբ.ը էջ 5

Հնչակեան Կուսակցութեան 128-Ամեակը



Շարունակուած էջ 1-էն

գծելով ներկաներուն չի շեցուց, որ Հնչակեան կուսակցութիւնը իր հիմնադրման առաջին օրէն եղած է իրաւազրկուածներուն եւ աղքատներուն արդար դատը պաշտպանող կուսակցութիւն եւ ձեռով մը ան կը կատարէ Քրիստոսի գաղափարական թելադրանքները: Սրբազանը կարեւորեց նաեւ կուսակցութիւններու դերը աշխօրուան իրականութեան մէջ եւ վստահեցուց, որ Հնչակեան կուսակցութիւնը կարեւոր ընելիքներ ունի բոլոր ոլորտներուն մէջ:

Սրբազան հօր օրհնութեան խօսքէն ետք բեմ հրաւիրուեցաւ «Սարգիս Տիրուհի» Ուսանողական Միութեան Հայաստանի վարչութեան անդամ Ընկ. Վարազդատ Բանոյեան:

Ընկ. Բանոյեան ներկայացուց այն ծանր պայմանները, որոնց դիմաց կանգնած է աշխօրուան հայրենի երիտասարդութիւնը:

ՄԴՀԿ Հայաստանի վարչութեան ատենապետ Ընկ. Նարեկ Գալստեան ներկայացուց այն հանգամանքները, որոնցմէ անցաւ կու-

սակցութիւնը, յատկապէս վերջին տարիներուն: Ընկերը նաեւ կարեւորեց կուսակցութեան տարիներու ունեցած պատմական փորձը եւ այդ առումով նկատել տուաւ, որ աշխօրուան իրականութեան քիչ են այն կուսակցութիւնները, որ 128 տարիներու փորձ եւ գոհաբերումի ու նուիրման աւանդ ունին:

Ընկ. Գալստեան իր խօսքի աւարտին ներկաներուն յայտնեց, որ յառաջիկայ հանգրուանը կուսակցութեան գործնական աշխատանքներու սկսման հանգրուանը պիտի ըլլայ: Ան նաեւ ըսաւ, որ ինչպէս ամէն տարի այս տարի եւս 24 Ապրիլին կուսակցութիւնը դէպի Ծիծեռնակաբերդ քայլերթ պիտի կատարէ ու պատշաճ կերպով մասնակցի Յեղասպանութեան գոհերու չիշատակին նուիրուած բոլոր միջոցառումներուն: Ան նաեւ յատարարեց, որ յառաջիկայ 1 Մայիսին կուսակցութիւնը կազմակերպած է երթ, որ նոյն պէս մեկնարկը պիտի համարուի կուսակցութեան յառաջիկայ ծրագիրներուն:

Օրուան պատգամախօս, ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենա-

«ԱՍԱԼԱ»-ի Մարտիկները Հիւրընկալուեցին ՀՊՏՀ-ում



Ջախէն աջ՝ Յակոբ Զուլֆաեան, Վազգէն Սիւլեան եւ ՀՊՏՀ ռեկտոր Կորիւն Աթոյեան

Մարտի 17-ին, Ուսանողական Խորհրդի նախաձեռնութեամբ ՀՊՏՀ-ում հիւրընկալուել էին Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի՝ «ԱՍԱԼԱ»-ի մարտիկներ Վազգէն Սիւլեանը եւ Յակոբ Զուլֆաեանը: Այս հանդիսաւոր միջոցառումը տրուեց ՀՊՏՀ Ուսանողական Խորհրդի կողմից կազմակերպուող Հայոց Յեղասպանութեան 100-ամեայ տարելիցին նուիրուած միջոցառումների շարքի մեկնարկը:

Նախքան միջոցառման մեկնարկը ՀՊՏՀ ռեկտոր Կորիւն Աթոյեանը եւ Ուսանողական Խորհրդի նախագահ Սերգէյ Խառատեանը հիւրերին ուղեկցեցին ՀՊՏՀ գոհուած ուսանող-ազատամարտիկների անուան լսարան:

Այնուհետեւ ՀՊՏՀ Մեծ հանդիսարանում մեկնարկեց հանդիսաւոր միջոցառումը: Նախ ցուցադրուեց ֆիլմ, որը պատմում էր «ԱՍԱԼԱ»-ի ստեղծման, գործունէութեան եւ առաքելութեան մասին, որի աւարտին բուռն ծափերի եւ ձեռքի մատների «յողթանակ» խորհրդանիշի ուղեկցութեամբ դահլիճ մտան գաղտնի բանակի անդամները:

Միջոցառման սկզբում հիւրերին ողջունեց ռեկտոր Կորիւն

Աթոյեանը: Այնուհետեւ ողջոյնի խօսք ասաց Ուսանողական Խորհրդի նախագահ Սերգէյ Խառատեանը, ով նշեց, որ ուսանողական Խորհրդի կազմում ստեղծուել է ժամանակաւոր յանձնաժողով, որը զբաղուելու է Հայոց Յեղասպանութեան 100-ամեայ տարելիցին նուիրուած միջոցառումների կազմակերպմամբ: Ս. Խառատեանը նաեւ խորհրդանշական յուշանուէր յանձնեց մարտիկներին:

Միջոցառման ընթացքում նախ ելոյթ ունեցաւ «Վան» գործողութեան հրամանատար Վազգէն Սիւլեանը: Վերջինս առաւել հանգամանալից պատմեց «ԱՍԱԼԱ»-ի կազմաւորման եւ գործունէութեան մասին ուշագրաւ պատմութիւններ, ներկայացրեց պատմական փաստեր: Վազգէն Սիւլեանը առանձնացրեց ու կարեւորեց Հայկական հարցի միջազգայնացումը եւ պայքարի կոչ արեց երիտասարդներին. «Մեր առանձնայատկութիւնը հայ լինելու մէջ է: Հայ ենք, ուրեմն՝ պէտք է պայքարենք»:

Միջոցառման աւարտին ուսանողները հնարաւորութիւն ստացան հիւրերին ուղղել իրենց հարցերը եւ ստանալ դրանց պատասխանները անմիջապէս «ԱՍԱԼԱ»-ի մարտիկներից:

Վարդան Կարապետեան Եւ Էրիք Եսայեան

Շարունակուած էջ 1-էն

ու ծանօթանալէ ետք անոնց դիրքորոշումներուն:

Վարդան Կարապետեան երկար տարիներ ապրած է Կլէնտէլ քաղաքին մէջ, ուր հաստատած է իր սեփական գործը: Ան իր անձնական եւ հասարակական կեանքը նուիրած է համայնքի ծառայութեան: Ան եղած է անդամ Քաղաքապետական Խորհուրդի կից գործող յանձնախումբերուն եւ ծանօթ է քաղաքի դիմազրաւած հարցերուն:

Էրիք Եսայեան բնիկ Կլէնտէլ-

ցի է եւ հինգ տարիէ կը ծառայէ քաղաքի ամենէն կարեւոր յանձնախումբը նկատուող Ծրագրաւորման Յանձնախումբէն ներս: Ան մասնագիտութեամբ որպէս ճարտարագէտ եւ քաղաքային ծրագրաւորման մասնագէտ, ծանօթ է փոխադրամիջոցներու, ջրային եւ ուժանիւծի միջոցներու բարելաւման ծրագիրներուն:

ՀԱՆ կոչ կ'ընէ Կլէնտէլի հայութեան մասնակցելու Ապրիլ 7-ի ընտրութիւններուն եւ քուէարկելու Վարդան Կարապետեանին եւ Էրիք Եսայեանին:

րութիւններով ու տաղնապներով լեցուն այդ հանգրուանին այդ նուիրեալները, կու գային կազմելու կուսակցութիւն մը, որուն վճռորոշ դեր պիտի վիճակուէր մեր ժողովուրդի գալիք բոլոր հանգրուաններուն համար: Պատմական փաստարկներով լեցուն եւ հերոսական խոյանքներով կամարուած մեր կուսակցութեան բոլոր էջերը կը վկայեն մէկ բան, որ ընկերվարական ամուր հիմքերուն վրայ կառուցուած գաղափարի կուռ այդ շէնքը մնաց անդրդուելի:

պետ՝ Ընկ. Յակոբ Տիրանեան խօսեցաւ կուսակցութեան հիմնադրութեան, անցած հանգրուաններուն, իրականացուցած յաջողութիւններուն, մղած պայքարներուն մասին, հասնելով մինչեւ ներկայ հանգրուանները, ներկայացնելով Հայաստանի եւ Սփիւռքի մէջ կուսակցութեան որդեգրած դիրքորոշումները: Այս առումով ան ըսաւ. «128 տարիներ առաջ իսկ մը մը նուիրեալներ ժընեւի մէջ հիմը կը դնէին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան: Մեր ժողովուրդի ամէնէն ծանր, անկիւնազարձային, դժուար-

ԳՈՍԹԱ ՄԵՍԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՆ ԸՍՏ ԱՐԺԱՆԻՈՅՆ ՈԳԵԿՈՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ



ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Գոսթա Մեսայի, ընդհանրապես հայ համայնքի եւ մասնաւորաբար Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ համար, Կիրակի 8 մարտի 2015-ը հանդիսացաւ աննախընթաց ամբողջօրեայ հանդիսութիւն մը, որ յատկանշուեցաւ Հայոց Յեղասպանութեան նուիրուած Սուրբ եւ Անմահ պատարագով, անոր յաջորդող 100-ամեակի Յուշակոթողին ուղարկուած օծումով եւ ապա, ուշ երեկոյեան, համագաղութային ոգեկոչման տպաւորիչ ձեռնարկով:

Թեմիս Բարեջան Առաջնորդ Հօր՝ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեանի հովանաւորութիւնը վայելող վերոյիշեալ Սուրբ Պատարագը, Յուշակոթողի Օծումն ու Ոգեկոչական 100 ամեակը նախաձեռնուած էին Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Մուշեղ Աւագ Քհնյ. Թաշճեանի, Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ Ծիսական Խորհուրդի, եւ Յեղասպանութեան 100-ամեակի Յանձնախումբի կողմէ: Անոնք ոչ մէկ ջանք խնայած էին իրենց կազմակերպած ընթացիկ օրուան ձեռնարկները յաջողութեամբ պատկերու համար: Դիտել տանք անմիջապէս, որ օրուան պատարագիչ, Թեմիս Բարեջան Առաջնորդ Սրբազան Հայրը, պիտի գար պատգամելու, թէ՛ «... Ապրիլ 24-ը այլեւս կեանքի տօնն է դարձած մեր ազգի զաւակներուն համար, 24-ը սուգի տօն էր միայն, բայց այսօր իր մէջ կը բովանդակէ նոր իմաստ մը, քանզի մոխիրներէն վերածնուած է ազգը, նահատակներուն որբացած որդիները դարձած են ծնողներ եւ

մեծ ծնողներ: Ազատատենչ ոգիով իր կեանքը կը կերտէ Մայր Հայրենիքը...»: Սրբազան Հայրը, իր մտորումները շարունակելով դիտել պիտի տար, թէ մեր նահատակները՝ արմատներն են մեր կեանքին, անոնց արեան հեղումը՝ արթնութեան հրաւիրն է մեր կեանքին, անոնց ոգին՝ մեր հոգեւոր կոթեան նպատակն ու ճանապարհն է, որ մենք ապրինք մեր արդար դատի պահանջատիրութեամբ: «... իրենց արեան հեղումով դարձաւ հիմքը, նոր՝ Հայաստանին, նոր՝ եկեղեցիին, նոր՝ արշալոյսին»:

Յաւարտ Սուրբ Պատարագի, հանդիսաւոր կերպով տեղի ունեցաւ Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած Յուշակոթողին օծումը, զոր կատարեց պատարագիչ Սրբազան Հայրը, մասնակցութեամբ Հոգեւոր Հովիւներ՝ Արժ. Տէր Մուշեղ Աւագ Քհնյ. Թաշճեանի, Արժ. Տէր Վազգէն Աւագ Քհնյ. Մովսէսեանի, սարկաւազներուն եւ երգչախումբին, որոնք թափօրով ուղղուեցան դէպի Եկեղեցւոյ բաւան կանգնած Յուշակոթողը: Օծման հանդիսաւոր արարողութիւնէն ետք, հոգեպարար ելոյթով հանդէս եկաւ Արժ. Տէր Մուշեղ Աւագ Քհնյ. Թաշճեան: Իր խօսքին մէջ, Արժ. Քահանան, համառօտակի անդրադառնալէ ետք հայ ժողովուրդի դէմ՝ Օսմանեան Թուրքիոյ իրագործած Յեղասպանութեան ազգակործան ոճիրին մասին, Սրբ. Գրային Գիրքէն վերցուցած, Պետրոս Առաքեալի հետեւողութեամբ մէջբերեց հետեւեալ պատգամը,

Շար.ք էջ 22

ԱՐՑԱԽԻ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԻ ՀԱՄԵՐԳԸ ՎԵՐԱԾՈՒԵՑԱՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՒԱՔԻ



Գ. ՄՈՒՈՅԵԱՆ

Ուրբաթ, 13 Մարտ, 2015, երեկոյեան ժամը Տիւրքիայի Ալեքս Հանրաձանօթ թատրոնի մէջ, աւելի քան հազար հոգիներու ներկայութեամբ տեղի ունեցաւ Արցախի Հանրապետութեան պետական սենեկային նուագախումբի համերգը, հովանաւորութեամբ Հ.Բ.Ը.Մ.Ի եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամին, ինչպէս նաեւ համագործակցութեամբ Լեւոնային Ղարաբաղի Մշակոյթի նախարարութեան:

Շուրջ երկու ժամ տեւող զեղարուեստական յայտագիր մը գործադրուեցաւ ղեկավարութեամբ Գէորգ Մուրատեանի: Արտասահման ուղեւորուելու վիզայի դժուարութեան պատճառով չորս ջութակահարներ չէին կրցած միանալ իրենց խումբին: Այսուհանդերձ մնացեալ անդամները կրցան ձեւով մը ներդաշնակութիւնը պահել ներկայ հասարակութեան հրամցելով հայ եւ օտար երգահաններու գործերէն առնուած գողտրիկ ծաղկեփունջ մը: Համերգի բովանդակութիւնը հանրամատչելի էր: Հոն կար թէ կրօնականը («Մորհուրդ Մեծ») եւ թէ ժողովրդականը («Բերդ Պար» «Քոչարի»), «Վաղարշապատի Պար» եւ թէ աշուղականը («Քանի վուր ջան իմ»):

Բեմին վրայ հաճելի ներկայութիւն մըն էր երգչուհի Իրինա Չաբեանը: Միջազգային բեմերու վրայ համբաւ ունեցող վաստակաշատ Իրինան (սոփրանօ) իր «Նոր Ծաղիկ» եւ «Չեմ կրնայ մոռնալ» երգերով բարձր գնահատականի արժանացաւ:

Գալով մայեսթրօ Գէորգ Մուրատեանին իրականութիւնն ըսելու համար իւրօրինակ երեւոյթ մըն էր («Ֆէնոմէն»): Իւրաքանչիւր կատարումին համար ունէր

կարճ եւ խանդավառ ու անմիջական մեկնաբանութիւն մը: Իր դիւրահաղորդ եւ ձեռնհաս ղեկավարի հանգամանքով կրցաւ վարպետօրէն իրար ազուցանել բեմն ու ժողովուրդը, տեղ տեղ ելեկտրականացնելով ընդհանուր մթնոլորտը...:

Երեկոյի յայտագրի ամենակարեւոր մասը անուանի երգահան եւ խմբավար Հենրիկ Անասեանի դուդուկի համար գրուած եզակի կոնսերտն էր: Այս մէկը գրուած էր սիմֆոնիք նուագախումբի համար: Սակայն սենեկայինի չարմարուելու համար իսկոյն բեմ երեւցան տարբեր երաժշտական գործիքներու (վալթ հօրն, թրոմբէթ, ֆլիւթ, հօպօ, գլարինէթ, հարուածային, եւ այլն) կատարողներ: Արդարեւ հայ ժողովուրդի կեանքի տարբեր հանդրուանները բնութագրող արուեստի բացառիկ գործ մըն էր Անասեանի այս ստեղծագործութիւնը: Մեզի համար մեծ վայելք մըն էր ըմբռնելու երիտասարդ եւ տաղանդաւոր դուդուկահար Արտաւազը Թաղեւոսեանի մենանուագի բաժիններու կատարումները: Իր խորապէս ապրումով եւ բարձրարուեստ ու անթերի մեկնաբանութիւնները արժանացան բոլորի անվերապահ գնահատանքին ու երկարատեւ բուռն ծափահարութիւններուն: Պատիւը կ'երթայ թէ իրեն, թէ նուագողներուն եթէ մասնաւորաբար գործի բուռն հեղինակին՝ երգահան մայեսթրօ Հենրիկ Անասեանին:

Երաժշտասէր եւ հայրենասէր հայ հասարակութիւնն այդ երեկոյ ոչ միայն քաջալերեց Արցախի նորակազմ սենեկային նուագախումբն ու խմբավարը, այլեւ իր անվերապահ զօրակցութիւնը յայտնեց իր ապագան կերտող Արցախի ազատատենչ հայ ժողովուրդին:

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ԻՐԱՔԱՅԱՅԵՐՈՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ



Կազմակերպությունները իրաքայնորեն Բարեգործական Միությունների, շահեկան դասախոսություններն մը տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանության 100ամեակի առթիվ, Կիրակի, Փետրուար 22, 2015ին, Քրեանենթայի Հայ Առաքելական Եկեղեցու սրահին մէջ: Օրուան դասախոսն էր Միությունների հիմնադիր եւ խորհրդատու մարմինի անդամ Պր. Համբարձում Աղպաշեան:

Երեկոյի սկիզբին, Տոբթ. Անուշ Եսայեան հակիրճ տեղեկություններ տալէ ետք օրուան նիւթին մասին՝ բեմ հրաւիրեց բոլորին ծանօթ դասախօսը, որ տասնեակ սահիկներու միջոցաւ, որոնք ցուցադրուեցան Սարո Աղպաշեանի կողմէ, կրցաւ ձեռնհասութեամբ գոհացուցիչ եւ բաւարար տեղեկություններ փոխանցել նիւթին մասին:

Առաջին մասը Պատմական Հայաստանի մասին էր. սկսելով Մեծն Տիգրանի ծովէ-ծով Հայաստանի տարածքէն, անցնելով Տրդատ Երրորդի շրջանէն, Պարսիկներու եւ Բիւզանդացիներու տիրապետումէն եւ Հայաստանի բաժանումէն, հասնելով մինչեւ Օսմանցիներու կողմէ Արեւմտեան Հայաստանի գրաւումը եւ Ռուսներու կողմէ Արեւելեան Հայաստանի գրաւումը, եւ ի վերջոյ՝ Սուլթան Ապտուլ Համիտի ջարդերը:

Երկրորդ մասը՝ 1915ի Հայոց Յեղասպանության մասին էր. իթի-հատի ծրագիրները, թալէաթի, կնուէրի եւ ձէմալի դաւադրությունները, հայ մտաւորականներու նահատակությունը, տղամարդոց բանակի ծառայությունը եւ ոչնչացումը, կիներու եւ երեխաներու գաղթի ճամբուն վրայ կոտորումը, մէկ ու կէս միլիոն անմեղ հայերու ջարդը եւ Արեւմտեան Հայաստանի կորուստը, ինչպէս նաեւ՝ Աթաթուրքի կողմէ նախատեսուած ջարդերու լրացումը:

Երրորդ մասը՝ ապրելու, վերականգնելու եւ պահանջատիրության մասին էր: Անիկա կը ներկայացնէր 1965ին աշխարհով մէկ հայութեան ոտքի կանգնումը, Յեղասպանության 50ամեակի նշումը, Մայր հողին վրայ Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի կառուցումը, Նոր գարթօնքի շրջանի մը ծագումը եւ ողջ մարդկության ուշադրության գրաւումը. ապա կարգով նշուեցան Գաղտնի բանակի եւ Արդարության ֆէտայիներու վրիժառուության գործողությունները, որոնք մեծ աղմուկ բարձրացուցին աշխարհի մէջ ու սարսափի մատնեցին թշնամին: Դասախօսը նաեւ անդրադարձաւ Հրանդ Տինքի սպանության ու անոր ունեցած ազդեցության մասին՝ առողջամիտ թուրք մտաւորականներու վրայ, որոնք պահանջեցին պետությունէն ճանչնալ Հայոց Յեղասպանությունը:

Ի վերջոյ, ներկայացուեցաւ Յեղասպանությունը ճանչցող երկիրներու եւ մաս մը համաշխարհային կազմակերպություններու ցանկը, ինչպէս նաեւ՝ 100ամեակը խորհրդանշող Անմոռուկ Ծաղիկը:

Յոյսով ենք, որ այսպիսի շահեկան դասախօսություններու շարքը կը շարունակուի՝ միշտ վառ պահելու համար մեր ազգի սուրբ Դատը: Թղթակից

ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՐԵԱՅ ԶԱՄԱՆՅՔԻ ԵՒ ԶԱՅՑ. ԵԿԵՂԵՑՈՑ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԿՈՂՄԵ

Կազմակերպությունները Ամերիկայի Հրեայ Համայնքի եւ Հայոց Եկեղեցու Արեւմտեան Թեմի, Հայոց Յեղասպանության 100րդ Տարելիցի Ոգիկոչման առթիւ Կիրակի, Մարտ 22ի երեկոյեան ժամը Յին Առաջնորդարանի Նազարէթ եւ Սիւմա Գալայճեան Սրահին մէջ տեղի պիտի ունենան բանախօսություններ:

Երեկոյի բնաբանն է. «100 Տարիներ Յետոյ - Անդրադարձումներ Երկու Համայնքներու կողմէ»:

Երեկոյի Գլխաւոր Բանախօսներն են Դոկտ. Սթիֆըն Տ. Սմիթ՝ Վարիչ Տնօրէնը Հարաւային Գալիֆորնիայի Համալսարանի "Shoah Foundation"ի եւ Դոկտ. Ռիչըրտ Յովհաննիսեան՝ Պատուակալ Փրոֆեսոր Հայոց եւ Մերձաւոր Արեւելքի Պատմությունիւ Լոս Անճելըսի Գալիֆորնիոյ Համալսարանի (UCLA), ինչպէս նաեւ Այցելու

Փրոֆէսորը Պատմությունիւ Հարաւային Գալիֆորնիայի Համալսարանին մէջ:

Իրենց սրտի խօսքով հանդէս պիտի գան Գոնկրէսմէն Ադամ Շիֆ՝ Գալիֆորնիայի 28րդ Գոնկէրսական Շրջանէն, Տին Շքրամ՝ Նախագահ Ամերիկայի Հրեայ Համայնքի-Լոս Անճելըսի Շրջանի եւ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրաթեան՝ Առաջնորդ Հայոց Եկեղեցու Արեւմտեան Թեմի:

Տեղի պիտի ունենայ նաեւ մշակութային յայտագիր՝ պարեր, երգեր եւ երգչախումբի կատարումներ:

Մուտք ազատ է: Հաւատացեալներ սիրով կը հրաւիրուին Գալայճեան Սրահ կազմակերպուած այս բացառիկ ձեռնարկին եւ իրենց յարգանքի տուրքը մատուցանելու մեր բիւրուաւոր նահատակներու անմեռ յիշատակին:

ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԻՐԱՄԵԱԿԸ ՆՇՈՂ ԶԱՄԱՇԽԱՐԶԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԻ ՕՐ ԼԱՐՔԷՆ ՆԵՐՍ

Համաշխարհային գրականության փառատօնը ն Լեփսիւհատուս Փոքտամը այս տարի, ոգեկոչելու համար Հայոց Յեղասպանությունը, 21 ապրիլ 2015ը նշանակած են համաշխարհային ընթերցումի օր:

Աշխարհի չորս ծագերուն, գրողներ, մտաւորականներ եւ արուեստագէտներ, նոյն օրը ռումանահայ գրող Վարուժան Ոսկանեան Շարք էջ 22

Ս.Դ.Ն.Կ.-ի Տեղեկատուութեան Դիւանի Նախաձեռնութեամբ՝

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ

ԴՈԿՏ. ԱԲԷԼ ԲՏՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

«Հայրենիքի Ազատագրութեան Բանակի Համոզուած Զինուորները»

Գրքի հրատարակութեան Առթիւ

Խօսք կ'առնէ
ԴՈԿՏ. ԿԱՐՕ ՄՈՄՃԵԱՆ

Հատորը կը ներկայացնէ
ՈՍԿԱՆ ՄԻԻԹԱՐԵԱՆ

Ելոյթ կ'ունենայ
ԴՈԿՏ. ԱԲԷԼ ԲՏՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Տեղի կ'ունենայ
Կիրակի, Ապրիլ 12, 2015
Կ.Ե. Ժամը 5:00-ին

ՆԿԲՄ-ի Կարօ Սողանալեան սրահ
1060 N. Allen Ave., Pasadena

«100 ՏԱՐԻ, 100 ԱՐՈՒԵՍ» ՆԱԽԱԳԻԾԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԱՐՈՒԵՍԻ ԼԵԶՈՒՈՎ



էջվա արուեստների հիմնադրամը նախաձեռնել է «100 տարի, 100 արուեստ» նախագիծը, որի նպատակն է մէկ տեղում հաւաքել Հայոց ցեղասպանութեանը նուիրուած Հայաստանի եւ Մփիւռքի յայտնի արուեստագէտների ստեղծագործութիւնները:

Ինչպէս նախագծի կազմակերպիչներն են նշում, 2015 թիւը շատ կարեւոր տարի է Հայաստանի համար. այն 100-ամեայ յիշողութեան, Հայոց ցեղասպանութեան փաստը աշխարհով ճանաչելի դարձնելու եւ հայ ազգի վերածնունդը խորհրդանշող տարի է:

Արուեստի հզօրութիւնն անժխտելի է եւ արուեստի գործերը՝ չաւերժ: Էլւա արուեստների հիմնադրամը ցանկանում է Հայոց ցեղասպանութեան փաստը աշխարհով ճանաչելի դարձնել մեղիա արտայայտման հզօրագոյն գործիքներից մէկի՝ արուեստի միջոցով:

Հայ նկարիչների տարբեր սերունդների աշխատանքներում իրենց ուրոյն տեղն են գրաւել Հայոց ցեղասպանութեանը նուիրուած մի շարք նկարներ, որոնք երբեմն ցուցադրուել են կամ մոռացութեան մատնուել, որոշ գործեր էլ մինչեւ օրս ցուցադրուում են, սակայն, առհասարակ շատ քիչ են խօսուում նման կտաւների մասին:

Քաջ գիտակցելով արուեստի հզօր ուժը, այս նախագծի նպատակն է՝ մէկ տեղում հաւաքել Հայոց ցեղասպանութեանը նուիրուած Հայաստանի եւ Մփիւռքի յայտնի արուեստագէտների ստեղծագործութիւններ՝ (Արշիլ Գորկի, Գրիգոր Խանջեան, Յակոբ Յակոբեան, Մինաս Աւետիսեան, Ժանսեմ, Էդուարդ Իսաբեկեան՝ մինչեւ Ժամանակակից երիտասարդ նկարիչներ), որոնք իրենց նկարներով արդէն իսկ սեփական ներդրումն են ունեցել Հայոց ցեղասպանութեան հարցը փաստելու գործում, իսկ «100 տարի, 100 արուեստ» նախագծի նպատակն է շարունակել հայ արուեստագէտների սկսած ճանապարհը, համախմբել այդ արուեստի հզօր գործերը եւ տարածել աշխարհով մէկ:

«100 տարի, 100 արուեստ» նախագծի առաքելութիւնն է Հայոց ցեղասպանութեան փաստը՝ այլընտրանքային ձեւերով՝ զեղարուեստական-վիզուալ/տեսողական միջոցներով արտայայտել, տարածել, աշխարհաճանաչ դարձնել:

Ինչպէս նաեւ նախագիծը հանդիսանում է արխիւացնելու, միասին մէկ տեղում հաւաքելու՝ Հայոց ցեղասպանութեան մասին փաստող Հայաստանի եւ Մփիւռքի նկարիչ-

ների աշխատանքներն, որոնք ոչ միայն ներկայ եւ ապագայ սերունդների համար կարող են կրթա-

Շար.ք էջ 22

ՈՒՐՈՒԳՈՒԱՅԸ ՀԱՄԵՐԳ ԿԸ ՁՕՆԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Ուրուգուայի գործադիր իշխանութիւնը որոշել է համերգ ձօնել Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին:

Համերգին, որը տեղի է ունենալու Ապրիլի 24-ի երեկոյեան երկրի գլխաւոր համերգասրահում՝ Մոնտեվիդիոյի Ազգային աուդիտորիումում, մասնակցելու են Ուրուգուայի սիմֆոնիկ նուագախումբն ու պետական երգչախումբը: Ակնկալուում է շուրջ 2 հազար ունկնդիրների ներկայութիւնը:

Համերգի դիրիժոր է նշանակուել ուրուգուայահայ տաղանդաւոր երաժիշտ Ալւարօ Յակոբեանը:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում մասնորոն որպէս աննախադէպ իրադարձութիւն գնահատեց առաջիկայ համերգը: Ներկայացուելու են հատուածներ Արամ Խաչատրեանի «Սպարտակ»-ից ու «Փայտանէ»-ից, ինչպէս նաեւ Ալեքսանդր Յարութիւնեանի ստեղ-



ծագործութիւններից: Նախատեսուած է նաեւ, որ Ուրուգուայի պետական երգչախումբը հայերէնով կը կատարի «Էրեբունի-Երեւան» եւ «Հայրենիքիս հետ» երգերը: Դիեգօ Կարամանուկեան, Մոնտեվիդիօ

**Փարամազ Մասնաճիւղի
Հիմնադրութեան 30 Ամեակի**

**ԾԱՇԿԵՐՈՅԹ
ԽՐԱԽՃԱՆԿ
եւ Ազգային Երգերու Երեկոյ**

Կազմակերպութեամբ՝

Փարամազ եւ Արսէն Կիտուր Մասնաճիւղերու

Երեկոն կը խանդավառէ՝
Առօ եւ իր նուագախումբը

Շաբաթ, 28 Մարտ 2015

երեկոյեան ժամը 8:30-էն սկսեալ
Հ.Կ.Բ.Մ.-ի Կարօ Սողանալեան Սրահէն ներս
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Մուտքի Ծուր Դոլար \$40

Massis Weekly

Volume 35, No. 10

Saturday, March 21, 2015

Over Forty House Members Introduce Bipartisan Resolution to Recognize the Armenian Genocide



WASHINGTON, D.C. — Reps. Robert Dold (R-IL), Adam Schiff (D-CA), David Valadao (R-CA), and Frank Pallone (D-NJ), along with 40 other Members of the House of Representatives introduced the Armenian Genocide Truth and Justice Resolution. This bipartisan resolution calls upon the

President to work toward equitable, constructive, and durable Armenian-Turkish relations based upon the Republic of Turkey's full acknowledgement of the facts and ongoing consequences of the Armenian Genocide. The resolution will

Continued on page 4

Russian President Putin to Attend Genocide Centenary in Armenia

MOSCOW — Russian President Vladimir Putin will attend ceremonies marking 100 years anniversary of the Armenian Genocide in Yerevan, the Kremlin said on Thursday.

"Yes, he will fly to Yerevan," Putin's spokesman Dmitry Peskov told AFP, adding the Russian leader had discussed the issue with his Armenian counterpart Serzh Sarkisian by telephone on Thursday.

During the phone conversation, the two heads of state coordinated the schedule of their upcoming meetings to ensure joint participation in the events marking both the 100th anniversary of the Armenian Genocide and the 70th anniversary of the Victory in the Great Patriotic War.

In a statement released on March 12, Putin's press service said he and Sarkisian also discussed their countries' "partnership" as well as "inte-



gration processes" within the Eurasian Economic Union (EES), which Armenia joined in January.

Earlier this year, French President Francois Hollande had also confirmed he will visit Armenia on April 24 for the commemoration of the 100th anniversary of the Armenian Genocide.

Turkey FM Threatens U.S. Over Armenian Genocide Recognition

ANKARA — Armenia is the cause of problems in the South Caucasus, Turkish Foreign Minister Mevlut Cavusoglu said. According to him, despite the fact that Turkey has repeatedly held out the hand of friendship to the Armenians, the country's authorities have rejected this in every way.

"So far, Armenia did nothing to bring about the Karabakh conflict settlement. Seeing as Yerevan has problems with all neighboring countries, Armenia must reconsider its foreign policy.

To normalize ties with Ankara, Yerevan must cede Karabakh territories," Cavusoglu said according to Turkish Anadolu news agency.

Cavusoglu also said that Ankara is counting on the unchanged position of the US authorities with respect to the Armenian Genocide recognition, otherwise relations between Washington and Ankara may deteriorate.

According to Cavusoglu, on April 24 the U.S. President Barack Obama will repeat his usual statement, without using the word 'genocide.'

Social Democrat Hunchakian Party Marks 128th Anniversary



YEREVAN — On Saturday March 14, 2015, Armenia's Social Democrat Hunchakian Party Executive committee marked the 128th anniversary of party's formation. The commemoration began with renowned tenor Artak Alavertean performing the anthems of the Republic of Armenia and the SDHP.

After a moment of silence honoring the memory of those martyrs who died defending the ideals of the Party, The Republic of Armenia and the Armenian people were observed, speeches were given by His Eminence Arch-

bishop Voskan Kalpakian, SDHP Sarkis Dkhrouni Youth movement member Varik Panoyan, SDHP Armenia Executive Chairman Narek Galstyan, and SDHP Central Committee Chair Hagop Dikranian.

Archbishop Voskan Kalpakian addressed the ideology of selflessness ingrained within the SDHP, which is conveyed by its historic leaders and members who became martyrs for the Armenian nation.

Continued on page 2

ACA Endorses Glendale City Council Candidates



GLENDALE — After numerous meetings, interviews and discussions with Glendale City Council candidates Vartan Gharpetian and Eric Yesayan, the Armenian Council of America (ACA) is proud to announce the endorsement of the two candidates for the upcoming Glendale Municipal Election.

Gharpetian, a long-time resident and small business owner in Glendale, has dedicated many years of his personal and professional life to the progress and growth of the community. In the past, he has served on the Parks, Recreation & Community Services Commission and advocated for more parks and open space, specifically in South Glendale. As a Commis-

sioner on the Historic and Preservation Committee, he worked diligently to preserve the integrity of historical sites and landmarks within the city. He is a proponent of keeping Glendale a family-friendly town and is opposed to the rapidly growing development of projects that will worsen the traffic and parking situation in the city.

Yesayan, a Glendale native and Urban Planner by profession, has served on the city's Planning Commission for the past five years. Working at an engineering and planning firm has given Yesayan the tools necessary to offer his expertise to the city in areas

Continued on page 2

Euronest Parliamentary Assembly Adopts Resolution on Armenian Genocide



YEREVAN — The Euronest Parliamentary Assembly, representing the European Union's member and partner states on Tuesday called for greater international recognition of the 1915 Armenian genocide and urged Turkey to "come to terms with its past."

A resolution adopted during a session in Yerevan, the EU Parliamentary Assembly said "the absence of unequivocal and timely condemnation of the Armenian Genocide largely contributed to the failure to prevent future crimes against humanity."

Therefore, it said, "prevention of genocides and crimes against humanity should be amongst the priorities of the international community." The world should also strive for "the restoration of the rights of people subjected to genocide," added the assembly bringing together members of the European Parliament and legislatures of ex-Soviet states involved in the EU's Eastern Partnership program.

The resolution further "deeply deplores" attempts to deny the World

War One-era slaughter of some 1.5 million Armenians in Ottoman Turkey and other genocides. In that regard, it "invites Turkey to come to term with its past."

The Euronest text was adopted less than a week after the European Parliament reaffirmed its recognition of the Armenian genocide in an annual report on human rights practices around the world. It urged all EU member states to do the same.

The measure was adopted with a vote of 33 to 4.

The Turkish Foreign Ministry rejected the EU legislature's appeal, saying that it is "utterly devoid of historical reality and legal basis."

"We find these assertions in all respects extremely problematic and regret them deeply," the ministry spokesman, Tanju Bilgic, said in a weekend statement. "The report interprets a certain period of the Ottoman Empire, which was tragic for all the people of the Empire, one-sidedly and with a sense of selective justice."

International Media Forum on Armenian Genocide Centennial Opens in Yerevan

YEREVAN — The Fifth Media Forum titled "At the foot of Ararat" kicked off in Yerevan, Armenia on March 18. The event to last through March 20 will focus on the Armenian Genocide committed by the Ottoman Empire in a century ago.

The forum is held under the motto "I remember and demand". The discussions will be comprised in four principles guiding the events in commemoration of the 100th anniversary of the Armenian Genocide – remem-

brance, gratitude, revival and international campaign for the recognition of genocides.

The gathering brings together representatives of international media organizations of various nations, scholars, public and political figures and create a media platform for discussing issues concerning the Armenian Genocide history, recognition, accountability of states and the prevention of future crimes, genocide denialism, destruction of cultural heritage among others.

Social Democratic Hunchakian Party

Continued from page 1

Mr. Panoyan, discussed the difficult conditions facing the nation's youth; the lack of jobs, the general negative perception of youth towards a future in Armenia, and the need to combat that perception by instilling good governance and opportunities for all.

In his speech, Mr. Galstyan conveyed the present status of the SDHP in Armenia, and highlighted the Party's years of experience which has guided it through the present day political difficulties in Armenia's political

sphere. In that respect, he stressed that there are few political parties in the world that have 128 years of experience and contribution towards their nation.

SDHP Central Committee Chair Hagop Dikranian who served as the keynote speaker, reflected on the party's founding and the various phases the party has gone through, the successes it has achieved, and continued efforts towards achieving its objectives, all of which have a bearing on today's Armenia and the Diaspora, as well as the adopted policy positions of the SDHP.

LA City Council Approves "Armenian Genocide Memorial Square"



LOS ANGELES – LA City Councilmembers voted unanimously on March 18, to approve a motion proposed by Councilmember Mitch O'Farrell to name the "Little Armenia" intersection of Hollywood Blvd and Western Ave "Armenian Genocide Memorial Square" and to erect memorial signs in the area, reported the Armenian Council of America (ACA)

Councilmember O'Farrell spoke of the thousands of Armenian-Americans who live in the "Little Armenia" District of Hollywood. He discussed the Armenian Genocide commemoration march that takes place every year, specifying that this year marks the centennial of the Armenian Genocide – the first Genocide of the twentieth century. "I propose that the intersection of this square will be a permanent reminder of the plight of the Armenian people, honoring the grandparents and great grandparents of the descendants of the Genocide," he added.

Echoing the sentiments of Councilmember O'Farrell, Councilmembers Krekorian and Fuentes talked about the importance of reminding the public of historic tragedies so that they never

happen again.

Valery Mkrtumian, Deputy Consul General of the Republic of Armenia in Los Angeles expressed his deep gratitude to the American people who rescued more than 100,000 Armenian orphans. "Today we are really proud of the valuable contribution of the Armenian people to the political landscape of the United States." He thanked the City Council for proposing an important measure in an area that is the heart of the Armenian-American Diaspora."

Asking the Los Angeles City Councilmembers to support the Armenian Genocide Memorial Square, ACA Chairman Sevak Khatchadorian expressed his sentiments regarding the motion; "While the Republic of Turkey inexplicably and adamantly has denied the occurrence of Genocide, and continues to do so a full century since, public recognition and awareness such as the proposed Armenian Genocide Memorial Square have helped Turkish citizens come to terms with the historical fact that is the Armenian Genocide and confront their own government's policy of denial."

Eurovision 2015: Armenia Changes Song Title

YEREVAN (Armenianow) — Armenia has changed the title of its Eurovision 2015 entry, the Song Contest's official website said.

Originally, the song unveiled last week and performed by the band, Genealogy, was titled "Don't Deny". Turkish and Azeri fans and media alleged Armenia was promoting a "political message" promoting the recognition of the Armenian Genocide on the year marking the centennial of the 1915 massacres.

"The Eurovision Song Contest (ESC) Reference Group took notice of Armenian Public TV's (AMPTV) request to change the title of their entry for the 2015 Eurovision Song Contest

into "Face The Shadow", after having submitted the song formally to the competition," it said.

"The European Broadcasting Union (EBU) and the ESC Reference Group welcome AMPTV's request to change the title of the song in order to take away any suggestion of political intent behind the song," it said, quoting Gohar Gasparian, the head of the Armenian Delegation, as saying on behalf of AMPTV that it was done "to strengthen the concept of an anthem of peace, love and unity".

Armenia will take part in the first Semi-Final of the 2015 Eurovision Song Contest on 19th of May.

ACA Endorses Glendale City Council Candidates

Continued from page 1

of transportation, water and energy policy. He has worked hard to ease the red tape for small businesses to allow a diverse mix of housing and improve city services for all residents. Committed to protect pedestrians and bikers in Glendale, Yesayan co-founded Walk Bike Glendale in 2011, the only pedestrian and bicyclist safety education and advocacy group in the city. He

also serves on the City of Glendale's Pedestrian Safety Task Force.

Thus, it is our belief, that the dedication, education, professional experience and community involvement of these two candidates, within the City of Glendale, will bring about a new wave of efficient, innovative and effective solutions to current challenges facing the city. They will be a tremendous addition to integrity and strength of the Glendale City Council.

ՅԱԻԵԼՈՒԱԾ



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԱԵԱՆ 60-ԱՄԵԱԿ

ՆՍՄՄ-Ի «ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ»Ի ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱԻ 50,000 ՏՈԼԱՐ



Մարտ 7, 2015 թուականը յատկանշական օր մը եղաւ Նոր Սեբունդ Մշակութային Միութեան պատմութեան մէջ: Այդ օր, Կլէմէնտիլի Dream Palace սրահին մէջ նշուեցան մեր միութեան հիմնադրութեան 60-ամեակը եւ Գալիֆորնիոյ մասնաճիւղի կազմաւորման 35-ամեակը:

Երեկոյի բացման իր խօսքին մէջ, օրուան հանդիսավարուհի՝ Արուս Գրիգորեան, ողջունելէ ետք լեցուն սրահի հանդիսականները, ըսաւ. «Այսօր վստահ եմ, որ բոլորս ալ ուրախ ժամեր պիտի անցընենք միասին: Ուրախ ենք, որովհետեւ կը տօնենք մեր սիրելի միութեան հիմնադրութեան 60-ամեակը եւ Գալիֆորնիոյ մեր մասնաճիւղի 35-ամեակը: Ուրախ ենք, որովհետեւ 60 տարիներէ ի վեր կըրցած ենք վառ պահել հայ մշակութային արժէքներ եւ զանոնք փոխանցել սերունդէ սերունդ: Ուրախ ենք, որ Լիբանանի մէջ ծնունդ առած մեր միութիւնը, այսօր աշխարհի 12 տարբեր երկիրներու մէջ իր ծառայութիւնները կը մատուցէ հայ մշակոյթին: Ուրախ ենք մանաւանդ, որ անցեալի արժէքները պահելու կողքին, լաւատեսութեամբ կը նայինք ապագային, նոր յոյսերով եւ նոր ծրագիրներով»:

